Արձանագրություն N 3
Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ ՀՀ ԱՆ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/15» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» «հունիսի» 2021թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Գևորգ Սիմոնյան (Բացակա)
Հանձնաժողովի անդամներ Կարեն Խաչատրյան,
Սմբատ Սմբատյան,
Հարություն Վարդանյան,
Արամ Գրիգորյան (Բացակա)
Հանձնաժողովի քարտուղար Միհրան Համբարձումյան

1. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Կ. Խաչատրյան)

«Հուսալի Կամար» ՍՊԸ կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ին կցված չեն **մասնագետների գրավոր համաձայնությունները ծառայությունները մատուցելու վերաբերյան և նշված մասնագետների որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները**:

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.2-ում բացակայում է **լաբորատոր փորձարկումների պլանը՝ համաձայն ծավալաթերթի և հսկողության գրաֆիկը**:

Մասնակցի կողմից որպես պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացվել են թվով 2 պայմանագրեր, որոնցից մեկի մասով ընդհանրապես ներկայացված չեն սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի/ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն կամ պայմանագրով նախատեսված փաստաթուղթ) պատճենները, իսկ մյուս պայմանագրի մասով ներկայացված **ակտերը պակաս են նույն պայմանագրի ընդհանուր գումարից 734.552 (յոթ հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամի չափով**:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետը՝ մասնակիցներին առաջարկվում է **ծանուցման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում** շտկել վերոնշյալ թերությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Խաչատրյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/15» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հուլիսի 09-ին ժամը 15:00-ին, ք. Երևան, Կատավարության տուն 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահող	_____	Կարեն Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ	_____	Սմբատ Սմբատյան
	_____	Հարություն Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Միհրան Համբարձումյան